# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**12 հունիսի 2026 թվական, N 106-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի՝ 2026 թվականի հունիսի 12-ի հերթական թիվ 9 նիստի հետևյալ օրակարգը.

1.1 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի՝ 2026 թվականի հունիսի 12-ի հերթական թիվ 9 նիստի օրակարգը հաստատելու մասին.

1.2 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի 2026 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 226-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

1.3 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2027 թվականի ծրագիրը հաստատելու մասին.

1.4 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Արևածագ գյուղի վարչական սահմանում գտնվող, կադաստրային քարտեզի 06-020-0117-0032 ծածկագրով 0.0225 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին.

1.5 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Օձուն գյուղի 4-րդ փողոց, 4-րդ նրբանցք, 1-ին փակուղի, Ալավերդի համայնքի Շնող գյուղի 16-րդ փողոց, 2-րդ նրբանցք և Ալավերդի համայնքի Նեղոց գյուղի 1-ին փողոց, 3-րդ փակուղի թվային անվանակոչման մասին.

1.6 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի, Սանահին Սարահարթ թաղամասի Ս. Շահումյան փողոց 3 հասցեում գտնվող, կադաստրային 06-002-0150-0435 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական

կառուցապատման գործառնական նշանակության 0.02321 հեկտար մակերեսով հողամաս օտարելու մասին.

1.7 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Օձուն գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային 06-112-0459-0009 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի 1.35036 հեկտար մակերեսով հողամաս օտարելու մասին.

1.8 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Օձուն գյուղի, 5-րդ փողոց 71/12 հասցեում գտնվող, կադաստրային 06-112-0460-0048 ծածկագրով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0.13101 հեկտար մակերեսով հողամաս օտարելու մասին.

1.9 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Օձուն գյուղի, 5-րդ փողոց 67/2 հասցեում գտնվող, կադաստրային 06-112-0460-0051 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.1625 հեկտար մակերեսով հողամաս օտարելու մասին.

1.10 Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին ներկայացված և հավանության արժանացած «Ալավերդի համայնքի հանրային տրանսպորտային ենթակառուցվածքի բարելավում՝ ժամանակակից կանգառներով և կանոնավոր երթուղիներով» ծրագրի իրականացման համար Ալավերդու համայնքապետարանի արտաբյուջետային նախահաշիվը հաստատելու մասին.

1.11 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | [signature] | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | [signature] | | |
| 4. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | [signature] | | |
| 5. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | [signature] | | |
| 6. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |
| 7. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | [signature] | | |
| 8. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 10. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 11. | ԼԻԼԻԹ | ՀԱԿՈԲՅԱՆ | | | |
| 12. | ՍԻՄՈՆ | ԶԱԽԱՐՈՎ | | | |
| 13. | ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ | | | |
| 14. | ՍԱՄՎԵԼ | ԷԼԲԱԿՅԱՆ | | | |
| 15. | ԱՐԱՄԱՅԻՍ | ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2026թ., հունիսի 12,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**12 հունիսի 2026 թվական, N 107-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 226-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով, 33-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2025 թվականի դեկտեմբերի 24-ի՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի 2026 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 226-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշումն ընդունվեց.

| | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ՄԿՐՏԻՉ ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 5. | ՖԼՈՐԱ ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 6. | ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 8. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 9. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 10. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 11. | ԼԻԼԻԹ | ՀԱԿՈԲՅԱՆ | | | |
| 12. | ՍԻՄՈՆ | ԶԱԽԱՐՈՎ | | | |
| 13. | ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ | | | |
| 14. | ՍԱՄՎԵԼ | ԷԼԲԱԿՅԱՆ | | | |
| 15. | ԱՐԱՄԱՅԻՍ | ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2026թ., հունիսի 12,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

ՀԱՎԵԼՎԱԾ
Ալավերդի համայնքի ավագանու
2026 թվականի հունիսի 12-ի N 107-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար) | ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ | ԱՇԽԱՏԱ-ՎԱՐՁԻ ՉԱՓԸ |
|---|---|---|---|---|---|
| **ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ** | | | | | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 465 000 | | 465000 |
| 2 | Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ | 1 | 370000 | | 370000 |
| 3 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 2 | 350000 | | 700000 |
| | **Ընդամենը** | **4** | | | **1535000** |
| **ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ** | | | | | |
| 4 | Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 330000 | | 330000 |
| 5 | Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար | 1 | 250000 | | 250000 |
| 6 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 300000 | | 300000 |
| 7 | Խմբակցության փորձագետ | 2 | 104000 | | 208000 |
| | **Ընդամենը** | **5** | | | **1088000** |
| **ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ** | | | | | |
| 8 | Վարչական ղեկավար | | | | |
| 9 | գ. Օձուն | 1 | 280000 | | 280000 |
| 10 | գ. Շնող | 1 | 270000 | | 270000 |
| 11 | ք. Ախթալա, գ. Աքորի, գ. Ճոճկան | 3 | 250000 | | 750000 |
| 12 | գ. Հաղպատ, ք. Շամլուղ, գ. Մեծ Այրում, գ. Թեղուտ, գ. Արևածագ, գ. Սանահին | 6 | 220000 | | 1320000 |
| 13 | գ. Կաճաճկուտ, գ. Ծաղկաշատ, գ. Ջիլիզա, գ. Ակներ, գ. Հագվի | 5 | 200000 | | 1000000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 14 | գ. Նեղոց, գ. Քարկոփ, գ. Ծաթեր, գ. Մղարթ, գ. Կարմիր Աղեկ, գ. Արդվի, գ. Այգեհատ | 7 | 180000 | | 1260000 |
| | **Ընդամենը** | **23** | | | **4880000** |
| | **ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ** | | | | |
| 15 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 360000 | | 360000 |
| | **Ընդամենը** | **1** | | | **360000** |
| | **ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ** | | | | |
| 16 | Բաժնի պետ | 1 | 310000 | | 310000 |
| 17 | Գլխավոր մասնագետ | 3 | 220000 | | 660000 |
| 18 | Առաջատար մասնագետ | 2 | 180000 | | 360000 |
| 19 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 150000 | | 150000 |
| | **Ընդամենը** | **7** | | | **1480000** |
| | **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ** | | | | |
| 20 | Բաժնի պետ | 1 | 310000 | | 310000 |
| 21 | առաջատար մասնագետ | 1 | 180 000 | | 180000 |
| 22 | Առաջատար մասնագետ | 2 | 180000 | | 360000 |
| 23 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 150000 | | 150000 |
| | **Ընդամենը** | **5** | | | **1000000** |
| | **ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲԱԺԻՆ** | | | | |
| 24 | Բաժնի պետ | 1 | 310000 | | 310000 |
| 25 | Գլխավոր մասնագետ | 3 | 220000 | | 660000 |
| 26 | Առաջատար մասնագետ | 2 | 180000 | | 360000 |
| 27 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 150 000 | | 150000 |
| 28 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 150000 | | 150000 |
| | **Ընդամենը** | **8** | | | **1630000** |
| | **ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ, ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻՆ** | | | | |
| 29 | Բաժնի պետ | 1 | 310000 | | 310000 |
| 30 | Գլխավոր մասնագետ | 1 | 220000 | | 220000 |
| 31 | Առաջատար մասնագետ | 3 | 180000 | | 540000 |
| 32 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 150000 | | 150000 |
| | **Ընդամենը** | **6** | | | **1220000** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺԻՆ** | | | | | |
| 33 | Բաժնի պետ | 1 | 310000 | | 310000 |
| 34 | առաջատար մասնագետ | 1 | 180000 | | 180000 |
| 35 | առաջատար մասնագետ | 2 | 180000 | | 360000 |
| 36 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 150000 | | 150000 |
| | **Ընդամենը** | **5** | | | **1000000** |
| **ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՏՈՒՐԻԶՄԻ ԲԱԺԻՆ** | | | | | |
| 37 | Բաժնի պետ | 1 | 310000 | | 310000 |
| 38 | Առաջատար մասնագետ | 1 | 180 000 | | 180000 |
| 39 | Առաջատար մասնագետ | 2 | 180 000 | | 360000 |
| 40 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 150000 | | 150000 |
| | **Ընդամենը** | **5** | | | **1000000** |
| **ԱՇԽԱՏԱԿԱԶՄ (ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՉՆԵՐԱՌՎԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐ)** | | | | | |
| 41 | Գլխավոր մասնագետ-իրավաբան | 1 | 220000 | | 220000 |
| 42 | Գլխավոր մասնագետ | 1 | 220000 | | 220000 |
| 43 | Գլխավոր մասնագետ | 2 | 220000 | | 440000 |
| 44 | Գլխավոր մասնագետ | 1 | 220000 | | 220000 |
| 45 | Առաջատար մասնագետ-սոց. աշխատող (ք. Ալավերդի, ք. Ախթալա, գ. Օձուն, գ. Շնող) | 4 | 180 000 | | 720000 |
| 46 | Առաջատար մասնագետ (զորահավաքային հարցեր) | 1 | 180 000 | | 180000 |
| 47 | Առաջատար մասնագետ | 2 | 180 000 | | 360000 |
| 48 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 150000 | | 150000 |
| 49 | Առաջին կարգի մասնագետ (գ. Օձուն, գ. Արևածագ, գ. Շնող, գ. Ճոճկան, ք. Ախթալա, ք. Շամլուղ, գ. Մեծ Այրում, գ. Հաղպատ, գ. Աքորի) | 14 | 150000 | | 2100000 |
| 50 | Երկրորդ կարգի մասնագետ (գ. Օձուն, գ. Հագվի, գ. Ամոջ, գ. Այգեհատ, գ. Արդվի, գ. Մղարթ, գ. Ծաթեր, գ. Կարմիր Աղեկ, գ. Թեղուտ, գ. Քարկոփ, գ. Նեղոց, գ. Մեծ Այրում, գ. Ծաղկաշատ, գ. Կաճաճկուտ, գ. Ջիլիզա, ք. Շամլուղ, գ. Ակներ, գ. Հաղպատ, գ. Սանահին) | 19 | 130000 | | 2470000 |
| | **Ընդամենը** | **46** | | | **7080000** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ** | | | | | |
| 51 | Գործավար | 1 | 200000 | | 200000 |
| 52 | Նկարիչ-օպերատոր | 1 | 150000 | | 150000 |
| 53 | Տնտեսվար | 1 | 150000 | | 150000 |
| 54 | Հավաքարար | 2 | 120000 | | 240000 |
| 55 | Հավաքարար (գ. Օձուն, գ. Հագվի, գ. Արևածագ, գ. Մղարթ, գ. Ծաթեր, գ. Շնող, գ. Թեղուտ, գ. Ճոճկան, գ. Նեղոց, գ. Մեծ Այրում, գ. Աքորի, գ. Այգեհատ, գ. Ջիլիզա, գ. Կաճաճկուտ, գ. Արդվի) | 9,25 | 104000 | | 962000 |
| 56 | Հավաքարար (ք. Շամլուղ) | 1 | 104000 | | 104000 |
| 57 | բանվոր (գ. Օձուն, գ. Շնող) | 2,5 | 120000 | | 300000 |
| 58 | Բանվոր (գ. Մեծ Այրում, գ. Արդվի, գ. Ծաթեր, Սանահին գյուղ, գ. Ակներ, գ. Ջիլիզա, գ. Կաճաճկուտ, գ. Թեղուտ, գ. Աքորի, գ. Հագվի, գ. Արևածագ, գ. Մղարթ, գ. Այգեհատ, գ. Ծաղկաշատ, գ. Սանահին) | 8,5 | 104000 | | 884000 |
| 59 | Բանվոր (գ. Ճոճկան, ք. Շամլուղ, գ. Հաղպատ) | 3 | 104000 | | 312000 |
| 60 | Հսկիչ (գ. Շնող) | 2 | 104000 | | 208000 |
| 61 | Վարորդ | 1 | 138000 | | 138000 |
| 62 | Պահակ | 1 | 117000 | | 117000 |
| 63 | Պահակ | 2 | 110000 | | 220000 |
| 64 | Վարորդ | 1 | 220000 | | 220000 |
| 65 | Վարորդ | 1 | 170000 | | 170000 |
| 66 | Համայնքի ավագանու խմբակցության գործավար | 3 | 104000 | | 312000 |
| | **Ընդամենը** | **40,25** | | | **4687000** |
| **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ** | | | | | |
| 67 | Պայմանագրային աշխատող | 1 | 310 000 | | 310000 |
| 68 | Պայմանագրային աշխատող | 1 | 180 000 | | 180000 |
| 69 | Աշխատակազմի առանձին գործառույթների իրականացման խորհրդատու | 1 | 300000 | | 300000 |
| 70 | Պայմանագրային աշխատող՝ վարորդ | 0,5 | 57595 | | 28797,5 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 71 | Պայմանագրային աշխատող՝ վարորդ | 1 | 125000 | | 125000 |
| 72 | Անասնաբույժ | 0,75 | 138666 | | 103999,5 |
| 73 | Անասնաբույժ | 1,5 | 82666 | | 123999 |
| 74 | Անասնաբույժ | 3,75 | 112666 | | 422497,5 |
| | **Ընդամենը** | **10,5** | | | **1594293,5** |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **165,75** | | | **28554294** |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**12 հունիսի 2026 թվական, N 108-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետով և հաշվի առնելով Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2027 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 5. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 6. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 7. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 8. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 10. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 11. | ԼԻԼԻԹ | ՀԱԿՈԲՅԱՆ | | | |
| 12. | ՍԻՄՈՆ | ՁԱԽԱՐՈՎ | | | |
| 13. | ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ | | | |
| 14. | ՍԱՄՎԵԼ | ԷԼԲԱԿՅԱՆ | | | |
| 15. | ԱՐԱՄԱՅԻՍ | ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2026թ., հունիսի 12,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

ՀԱՎԵԼՎԱԾ
Ալավերդի համայնքի ավագանու
2026 թվականի հունիսի 12-ի N 108-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
# ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
# ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2027Թ.
## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
## ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ

ԱԼԱՎԵՐԴԻ 2026Թ.

1. **Տեղեկատվություն համայնքի ազդակիր բնակավայրերի ու դրանց բնապահպանական կամ առողջապահական հիմնախնդիրների վերաբերյալ:**

Ալավերդին բազմաբնակավայր համայնք է, որի կազմում ընդգրկված են 3 քաղաքային և 26 գյուղական բնակավայրեր: Ալավերդի համայնքի խոշոր բնակավայրերը ձևավորվել են հանքարդյունաբերության շուրջ: Ալավերդի քաղաքում պղնձաձուլական գործարանը աշխատել է ավելի քան 250 տարի: Թեև այն վերջին տարիներին դադարեցրել է գործունեությունը, սակայն մինչ օրս առկա է գործարանի արտանետումների բացասական (անխուսափելի) ազդեցությունը շրջակա միջավայրի և բնակչության առողջության վրա:

Այսօր էլ համայնքում գործում են հանքարդյունաբերական խոշոր ձեռնարկություններ՝ «Թեղուտ» ՓԲԸ-ն, որն իրականացնում է Թեղուտի պղնձամոլիբդենային հանքաքարի արդյունահանում ու վերամշակում, և «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ, որը շահագործում է Շամլուղի պղնձի հանքավայրը և զբաղվում հանքանյութի մշակմամբ: Այս ձեռնարկությունների շրջակա միջավայրի վրա ազդեցությունն արտահայտվում է մի քանի ուղղություններով, ինչպիսիք են՝ տեխնոլոգիական ջրերի արտահոսքը, մարդու առողջության համար վտանգավոր գազերի ու փոշու արտանետումներն օդային ավազան և վտանգավոր նյութերի արտահոսքը: Այս ազդեցության անմիջական կրողները Թեղուտ, Շնող, Ախթալա, Շամլուղ, Մեծ Այրում, Փոքր Այրում և Ճոճկան ազդակիր բնակավայրերի բնակիչներն են ու շրջակա միջավայրը:

Հանքավայրերի երկարամյա շահագործումը, խոշոր պոչամբարների առկայությունը, խոշոր բեռնատարների երթևությամբ ծանրաբեռնված համայնքի միջով անցնող միջպետական ավտոճանապարհը, տարածքի անտառների ժամանակին իրականացված հատումները համայնքի բնակչության առողջության, օդի աղտոտվածության և բնության վրա ունեն էական բացասական ազդեցություն:

2. **Ծրագրի մշակման համար հիմք հանդիսացած հիմնախնդիրները:**

Ալավերդի համայնքը հանքարդյունաբերական ազդեցության գոտում գտնվող բազմաբնակավայր համայնք է, որտեղ երկար տարիների ընթացքում ձևավորված արդյունաբերական թափոնները շարունակում է ուղղակի ազդեցություն ունենալ բնակչության առողջության վրա: Գործող հանքավայրերի շահագործումը, հանքանյութի տեղափոխումն ու վերամշակման գործընթացները հանգեցրել են շրջակա միջավայրի, մասնավորապես՝ մթնոլորտային օդի բարձր աղտոտվածության:

Օդի աղտոտվածության հիմնական դրսևորումներից մեկը փոշու բարձր կոնցենտրացիան է, որը առավելապես պայմանավորված է արդյունաբերական գործունեությամբ, ինչպես նաև տրանսպորտային ծանրաբեռնվածությամբ: Համայնքի տարածքով անցնող միջպետական ճանապարհը հանդիսանում է ակտիվ բեռնափոխադրումների ուղի, որտեղ օրական մեծ քանակությամբ ծանր բեռնատարների (այդ թվում՝ «Թեղուտ» ՓԲ և «Ախթալա ԼՀԿ» ՓԲ ընկերություններին պատկանող բեռնատարների) երթևեկությունը նպաստում է ճանապարհային փոշու մշտական բարձրացմանը և տարածմանը բնակավայրերում:

Խնդիրը առավել սրվում է տարվա տաք և չոր եղանակներին, երբ ճանապարհների, բակային տարածքների և հանրային հատվածների ոչ բավարար խոնավեցման պայմաններում արդյունաբերական և ճանապարհային փոշին հեշտությամբ բարձրանում և երկար ժամանակ մնում է օդում կախված:

Սա հատկապես վտանգավոր է խոցելի խմբերի համար՝ երեխաների, տարեցների և շնչառական ու ալերգիկ հիվանդություններ ունեցող անձանց, որոնց մոտ նկատվում է հիվանդությունների սրացման, հաճախակի շնչառական գանգատների և ընդհանուր

առողջական վիճակի վատթարացման միտում: Նշված միտումները հաստատվում են հանրային լսումների ընթացքում բնակիչների կողմից ներկայացված դիտարկումներով և բարձրացված խնդիրներով:

Վերոնշյալ խնդիրները առավել արտահայտված են Ալավերդի համայնքի Թեղուտ, Շնող, Ախթալա, Շամլուղ, Մեծ Այրում, Փոքր Այրում և Ճոճկան բնակավայրերում, որոնք գտնվում են հանքարդյունաբերական առավել ինտենսիվ գոտում:

Ներկայումս համայնքն ապահովված չէ բավարար տեխնիկական միջոցներով, որոնք թույլ կտան պարբերական իրականացնել ճանապարհների և հանրային տարածքների ջրցանում և լվացում: Այս պայմաններում կանոնավոր ջրցանումը և լվացումը հանդիսանում է կարևոր միջոցառում:

Վերոնշյալ խնդրի լուծման նպատակով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի (մթնոլորտային օդի որակի բարելավմանն ուղղված, մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների կրճատման միջոցառումներ) համաձայն, անհրաժեշտ է ձեռք բերել ժամանակակից բազմաֆունկցիոնալ ջրցան-մաքրող մեքենա, որը հնարավորություն կտա իրականացնել ճանապարհների, փողոցների և հանրային տարածքների պարբերական լվացում և մաքրում ազդակիր բնակավայրերում:

### 3. Ծրագրի նպատակը, խնդիրները, ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները (կարճաժամկետ և երկարաժամկետ)

**Ծրագրի նպատակներն են՝**

- Մթնոլորտային օդի մաքրության պահպանություն:
- Շրջակա միջավայրի աղտոտվածության դեմ պայքար:
- Հանրային տարածքներում արդյունաբերական փոշու կուտակման և տարածման սահմանափակում:
- Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում համայնքի կառավարման արդյունավետության բարձրացում:

**Ծրագրի խնդիրներն են՝**

- Ապահովել համայնքի ազդակիր բնակավայրերի ճանապարհների, փողոցների և հանրային տարածքների պարբերական ջրցանում և լվացում:
- Նվազեցնել մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիան:
- Սահմանափակել արդյունաբերական և ճանապարհային փոշու տարածումը բնակավայրերում:
- Նվազեցնել բնակչության, հատկապես խոցելի խմբերի, առողջության վրա բացասական ազդեցությունները:

**Ծրագրի իրականացումից ակնկալվող կարճաժամկետ արդյունքներն են՝**

- Ճանապարհների և հանրային տարածքների փոշու մակարդակի տեսանելի նվազում:
- Խոցելի խմբերի շրջանում շնչառական գանգատների որոշակի նվազում:
- Օդի որակի բարելավում՝ փոշու քանակի նվազում:

**Ծրագրի իրականացումից ակնկալվող երկարաժամկետ արդյունքներն են՝**

- Շրջակա միջավայրի աղտոտվածության մակարդակի նվազում:
- Բնակչության առողջական վիճակի բարելավում և շնչառական հիվանդությունների նվազում:
- Ազդակիր բնակավայրերում կյանքի որակի բարձրացում և համայնքի գրավչության աճ:

**4. Ծրագրի կատարողականի կանխատեսումը (քանակական և որակական ցուցանիշներ՝ ըստ առանձին միջոցառումների):**

***Բնապահպանական***

- «Շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցմանն ուղղված տեխնիկական վերազինում՝ ջրցան-մաքրող բազմաֆունկցիոնալ մեքենայի ձեռքբերում», միջոցառում
  - *Ձեռք կբերվի 1 միավոր ժամանակակից բազմաֆունկցիոնալ ջրցան-մաքրող մեքենա, որը կնպաստի Ալավերդի համայնքի բնակավայրերում ճանապարհներից և հանրային տարածքներից արդյունաբերական և ճանապարհային փոշու կանոնավոր մաքրման և լվացման կազմակերպմանը: Մեքենան սեփականության իրավունքով կպատկանի Ալավերդի համայնքին և կշահագործվի համայնքապետարանի կողմից՝ «Ալավերդու կոմունալ փնտեսություն» ՀՈԱԿ-ի միջոցով:*
    *Ծրագրի իրականացման արդյունքում համակարգված ձևով կկազմակերպվի ճանապարհների և հանրային տարածքների պարբերական ջրցանումը՝ հատկապես տարվա չոր և տաք եղանակներին, ինչի շնորհիվ էականորեն կնվազի մթնոլորտային օդում փոշու մակարդակը և դրա տարածումը բնակելի գոտիներում՝ նպաստելով շրջակա միջավայրի պահպանությանը և բնակչության առողջության վրա բացասական ազդեցությունների նվազեցմանը:*

**5. Տեղեկատվություն Ծրագրի շահառուների վերաբերյալ:**

***Բնապահպանական***

Ծրագրի «Շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցմանն ուղղված տեխնիկական վերազինում՝ ջրցան-մաքրող բազմաֆունկցիոնալ մեքենայի ձեռքբերում» միջոցառման ուղղակի շահառուները Թեղուտ, Շնող, Ախթալա, Շամլուղ, Մեծ Այրում, Փոքր Այրում և Ճոճկան ազդակիր բնակավայրերի բնակիչները՝ ընդհանուր 10139 մարդ, ովքեր ջրցան-մաքրող մեքենայի ձեռքբերման արդյունքում լուծվող բնապահպանական և առողջապահական խնդիրների անմիջական կրողներն են:

**6. Կապը տվյալ մարզի կամ համայնքի զարգացման կամ շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրերի կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության փաստաթղթերի կամ շրջակա միջավայրի կամ առողջապահության ոլորտներում համայնքի առաջնահերթություններից բխող առաջարկությունների հետ,**

***Բնապահպանական***

«Շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցմանն ուղղված տեխնիկական վերազինում՝ ջրցան-մաքրող բազմաֆունկցիոնալ մեքենայի ձեռքբերում» միջոցառման

իրականացումը բխում է համայնքի զարգացման ռազմավարական փաստաթղթերից: Մասնավորապես, Ալավերդի համայնքի կայուն էներգետիկ և կլիմայական գործողությունների ծրագրում որպես համայնքին բնորոշ բնապահպանական խնդիրություն ընդգծված է մթնոլորտային օդում փոշու բարձր կոնցենտրացիան: Միաժամանակ, համայնքի 2023–2027 թվականների հնգամյա զարգացման ծրագրի նպատակների և գործողությունների պլանավորման բաժնում կարևորվում է բազմաֆունկցիոնալ տեխնիկական միջոցների ձեռքբերումը՝ նման բնույթի աշխատանքների արդյունավետ իրականացման համար:

Բացի այդ, ՀՀ Կառավարության կողմից ընդունվել են մի շարք ռազմավարական և ծրագրային փաստաթղթեր՝ ուղղված մթնոլորտային օդի որակի բարելավմանը և օդի աղտոտվածության նվազեցմանը: Այս փաստաթղթերով որպես առաջնահերթություն սահմանված են ճանապարհային և արդյունաբերական փոշու վերահսկման միջոցառումները, ինչպես նաև տեխնիկական լուծումների կիրառումը՝ մասնավորապես ջրցանման և մեխանիկական մաքրման համակարգերի ներդրման միջոցով:

7. **Տեղեկատվություն՝ Ծրագրի իրականացմանը պետական կառավարման համակարգի մարմինների կամ այլ կազմակերպությունների (այդ թվում՝ միջազգային) մասնակցության վերաբերյալ:**

Ծրագրի կազմման փուլում պետական կառավարման համակարգի մարմինների կամ այլ կազմակերպությունների կողմից Ծրագրի իրականացման մասնակցություն չի նախատեսվում:

8. **Տեղեկատվություն Ծրագրի համաֆինանսավորման վերաբերյալ (առկայության դեպքում):**

Ծրագրի համաֆինանսավորում նախատեսված չէ:

9. **Ծրագրում ներառված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ թույլատվական փաստաթղթերի պատճենները կամ տեղեկատվություն դրանց ստացման ուղղությամբ իրականացվող կամ իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ:**

Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման համար հատուկ թույլատվական փաստաթղթեր չեն պահանջվում: Բոլոր գործողությունները իրականացվելու են տեխնիկայի ձեռքբերման և շահագործման շրջանակներում՝ գործող օրենսդրությանը համապատասխան:

10. **Ծրագրի միջոցառումների իրականացման առաջնայնությունները:**

Կցվում է՝ Հավելված 1:

11. **Ծրագրի արժեքը (ըստ միջոցառումների):**

Ալավերդի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2027 թվականի ծրագրի («Շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցմանն ուղղված տեխնիկական վերազինում՝ ջրցան-մաքրող բազմաֆունկցիոնալ մեքենայի ձեռքբերում»

միջոցառման) ընդհանուր արժեքը 60376.200 ՀՀ դրամ է, որը կիրականացվի ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանվող գումարից:

**Ծրագրի իրականացման հիմքերը**

Ալավերդի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2027թ. ծրագիրը կազմվել է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» 2001 թվականի մայիսի 15-ի ՀՕ-188 օրենքի, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանվող գումարների հաշվին իրականացվող բնապահպանական ծրագրերի մշակման կարգը սահմանելու մասին» Շրջակա միջավայրի նախարարի 2023թ. սեպտեմբերի 4-ի N 310-Ն հրամանի, «Բնապահպանական ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները կամ դրանց փոփոխությունները շրջակա միջավայրի ոլորտի և առողջապահության ոլորտի լիազոր մարմինների հետ համաձայնեցման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի N 1544-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության 2023թ. օգոստոսի 24-ի N 1421-Ն որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ Օրենքի (Հոդված 12՝ Համայնքի պարտադիր խնդիրները) պահանջներին համապատասխան:

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Հավելված 1

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| NN ը/կ | ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԳՈՒՄԱՐԸ (հազ. դրամ) |
|---|---|---|
| **1.** | **ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ** | **60376,20** |
| 1.1. | Շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցմանն ուղղված տեխնիկական վերազինում՝ ջրցան-մաքրող բազմաֆունկցիոնալ մեքենայի ձեռքբերում | 60376,20 |

Ալավերդի համայնքի ղեկավար Դավիթ Ղումաշյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**12 հունիսի 2026 թվական, N 109-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԱԾԱԳ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-020-0117-0032 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.0225 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով սեփականության իրավունքի 17072024-06-0020 վկայականը, ՀՀ համայնքների ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 22.05.2026թ. տրված թիվ 1/փ 209 դրական եզրակացությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Արևածագ գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականության կադաստրային 06-020-0117-0032 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայր հողատեսքի 0.0225 հա մակերեսով հողամասը փոփոխել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, կապի հողեր գործառնական նշանակության՝ բջջային կապի կայանի կառուցման ու սպասարկման համար:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | [signature] | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 5. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 6. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 7. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 8. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 9. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 10. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 11. | ԼԻԼԻԹ | ՀԱԿՈԲՅԱՆ | | | |
| 12. | ՍԻՄՈՆ | ՁԱԽԱՐՈՎ | | | |
| 13. | ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ | | | |
| 14. | ՍԱՄՎԵԼ | ԷԼԲԱԿՅԱՆ | | | |
| 15. | ԱՐԱՄԱՅԻՍ | ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2026թ., հունիսի 12,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**12 հունիսի 2026 թվական, N 110-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑ, 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՆՈՂ ԳՅՈՒՂԻ 16-ՐԴ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԵՎ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՂՈՑ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 3-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹՎԱՅԻՆ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Թույլատրել Ալավերդի համայնքի Օձուն գյուղի 4-րդ փողոցն անվանակոչել հետևյալ թվային հաջորդականությամբ.
   1.1 4-րդ նրբանցք, 1-ին փակուղի (սկսվում է Օձուն գյուղի 4-րդ փողոցից և ավարտվում է 06-112-0062-0011 ծածկագրի մոտ):
2. Թույլատրել Ալավերդի համայնքի Շնող գյուղի 16-րդ փողոցն անվանակոչել հետևյալ թվային հաջորդականությամբ.
   2.1 2-րդ նրբանցք (սկսվում է Շնող գյուղի 16-րդ փողոց 1-ին նրբանցքից և ավարտվում է 06-088-0131-0018 ծածկագրի մոտ):
3. Թույլատրել Ալավերդի համայնքի Նեղոց գյուղի 1-ին փողոցն անվանակոչել հետևյալ թվային հաջորդականությամբ.
   3.1 3-րդ փակուղի (սկսվում է Նեղոց գյուղի 1-ին փողոցից և ավարտվում է 06-080-0620-0001 ծածկագրի մոտ):
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 5. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 6. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 7. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 8. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 9. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 10. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 11. | ԼԻԼԻԹ | ՀԱԿՈԲՅԱՆ | | | |
| 12. | ՍԻՄՈՆ | ՋԱԽԱՐՈՎ | | | |
| 13. | ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ | | | |
| 14. | ՍԱՄՎԵԼ | ԷԼԲԱԿՅԱՆ | | | |
| 15. | ԱՐԱՄԱՅԻՍ | ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2026թ., հունիսի 12,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**12 հունիսի 2026 թվական, N 111-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ, ՍԱՆԱՀԻՆ ՍԱՐԱՀԱՐԹ ԹԱՂԱՄԱՍԻ Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ 06-002-0150-0435 ԾԱԾԿԱԳՐՈՎ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.02321 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, ՀՀ կառավարության 28.09.2023թ. N 1667-Ն որոշմամբ հաստատված կարգով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով N 23012026-06-0031 վկայականը, «ՖՈՒԼ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 06.02.2026թ. տրված N FCG0426-0028 գնահատման հաշվետվությունը, Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս Ս. Շահումյան փողոց 3 հասցեում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0150-0435 ծածկագրով, բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.02321 հեկտար մակերեսով հողամասը, հասարակական կառուցապատում իրականացնելու նպատակով, էլեկտրոնային աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

   Էլեկտրոնային աճուրդի մեկնարկային գին սահմանել 2 909 000 (երկու միլիոն ինը հարյուր ինը հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 30 տոկոսի չափով և նվազագույն հավելման չափը՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

   Չկայացած էլեկտրոնային աճուրդի դեպքում երկրորդ էլեկտրոնային աճուրդի ժամանակ մեկնարկային գինը սահմանել 2 472 650 (երկու միլիոն չորս հարյուր յոթանասուներկու հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ, չվաճառվելու դեպքում՝ երրորդ և հերթական էլեկտրոնային աճուրդի ժամանակ մեկնարկային գինը սահմանել 2 036 300 (երկու միլիոն երեսունվեց հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:

2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

3. Հողամասի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չեն խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:
4. Ալավերդի համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել որոշմամբ սահմանված հողամասի էլեկտրոնային աճուրդը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | [signature] | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | [signature] | | |
| 4. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | [signature] | | |
| 5. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | [signature] | | |
| 6. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |
| 7. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | [signature] | | |
| 8. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | [signature] | | |
| 9. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | [signature] | | |
| 10. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | [signature] | | |
| 11. | ԼԻԼԻԹ | ՀԱԿՈԲՅԱՆ | [signature] | | |
| 12. | ՍԻՄՈՆ | ԶԱԽԱՐՈՎ | [signature] | | |
| 13. | ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ | [signature] | | |
| 14. | ՍԱՄՎԵԼ | ԷԼԲԱԿՅԱՆ | [signature] | | |
| 15. | ԱՐԱՄԱՅԻՍ | ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2026թ., հունիսի 12,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**12 հունիսի 2026 թվական, N 112-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ 06-112-0459-0009 ԾԱԾԿԱԳՐՈՎ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ 1.35036 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, ՀՀ կառավարության 28.09.2023թ. N 1667-Ն որոշմամբ հաստատված կարգով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով N 30122025-06-0042 վկայականը, «ՖՈՒԼ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 06/02/2026թ. տրված N FCG0226-0006 գնահատման հաշվետվությունը, Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, համայնք Ալավերդի, Օձուն գյուղում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0459-0009 ծածկագրով,գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահեղ հողատեսքի 1.35036 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, էլեկտրոնային աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

   Էլեկտրոնային աճուրդի մեկնարկային գին սահմանել 5 666 000 (հինգ միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 30 տոկոսի չափով և նվազագույն հավելման չափը՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

   Չկայացած էլեկտրոնային աճուրդի դեպքում երկրորդ էլեկտրոնային աճուրդի ժամանակ մեկնարկային գինը սահմանել 4 816 100 (չորս միլիոն ութ հարյուր տասնվեց հազար հարյուր) ՀՀ դրամ, չվաճառվելու դեպքում՝ երրորդ և հերթական էլեկտրոնային աճուրդի ժամանակ մեկնարկային գինը սահմանել 3 966 200 (երեք միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:
2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապիցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար

նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեքներ կայացնող հողամասերում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հողամասի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չեն խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:
4. Ալավերդի համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել որոշմամբ սահմանված հողամասի էլեկտրոնային աճուրդը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 5. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 6. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 7. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 8. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 9. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 10. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 11. | ԼԻԼԻԹ | ՀԱԿՈԲՅԱՆ | | | |
| 12. | ՍԻՄՈՆ | ԶԱԽԱՐՈՎ | | | |
| 13. | ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ | | | |
| 14. | ՍԱՄՎԵԼ | ԷԼԲԱԿՅԱՆ | | | |
| 15. | ԱՐԱՄԱՅԻՍ | ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2026թ., հունիսի 12,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**12 հունիսի 2026 թվական, N 113-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑ 71/12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ 06-112-0460-0048 ԾԱԾԿԱԳՐՈՎ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.13101 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածներով,«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, ՀՀ կառավարության 28.09.2023թ. N 1667-Ն որոշմամբ հաստատված կարգով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով N 03072024-06-0059 վկայականը, «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի կողմից 02.06.2026թ. տրված № 10-Հ/02.06.2026թ. գնահատման հաշվետվությունը, Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 5-րդ փողոց 71/12 հասցեում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0460-0048 ծածկագրով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0.13101 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական արտադրական օբյեկտ կառուցելու նպատակով, էլեկտրոնային աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

   Էլեկտրոնային աճուրդի մեկնարկային գին սահմանել 1 920 000 (մեկ միլիոն ինը հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 30 տոկոսի չափով և նվազագույն հավելման չափը՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

   Չկայացած էլեկտրոնային աճուրդի դեպքում երկրորդ էլեկտրոնային աճուրդի ժամանակ մեկնարկային գինը սահմանել 1 632 000 (մեկ միլիոն վեց հարյուր երեսուներկու հազար) ՀՀ դրամ, չվաճառվելու դեպքում՝ երրորդ և հերթական էլեկտրոնային աճուրդի ժամանակ մեկնարկային գինը սահմանել 1 344 000 (մեկ միլիոն երեք հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ:
2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
3. Հողամասի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չեն խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

4. Ալավերդի համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել որոշմամբ սահմանված հողամասի էլեկտրոնային աճուրդը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 5. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 6. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 7. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 8. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 9. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 10. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 11. | ԼԻԼԻԹ | ՀԱԿՈԲՅԱՆ | | | |
| 12. | ՍԻՄՈՆ | ԶԱԽԱՐՈՎ | | | |
| 13. | ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ | | | |
| 14. | ՍԱՄՎԵԼ | ԷԼԲԱԿՅԱՆ | | | |
| 15. | ԱՐԱՄԱՅԻՍ | ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2026թ., հունիսի 12,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**12 հունիսի 2026 թվական, N 114-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԻ, 5-ՐԴ ՓՈՂՈՑ 67/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ 06-112-0460-0051 ԾԱԾԿԱԳՐՈՎ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.1625 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածներով,«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետիդրույթներով, ՀՀ կառավարության 28.09.2023թ. N 1667-Ն որոշմամբ հաստատված կարգով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով N 05112025-06-0024 վկայականը, «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի կողմից 02.06.2026թ. տրված № 24-Հ/02.06.2026թ. գնահատման հաշվետվությունը, Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

